

նոյն վարժարանի սաներէն Պ. Պ. Գափամաճեան, Յակոբոֆ և զեռ մի քանի եռանդուն Հայ պատանիներ բողոքեր են այս բռնութեան դէմ և իրենց ծնողաց հաւանութեամբը մտադիր են եղեր վարժարանը թողուլ:

Տեսնենք, Ռօպէրթեան վարժարանի հայ աշակերտաց ծնողքը Հայկայ, Գրիգորի և Վարդանայ Աստուածը պաշտած ժամանակին՝ որտե՞ր թողուն որ իրենց որդիքն ալ Պապին կամ Միսիօնարին Աստուածը պաշտեն:

Կ. ՔԵՐԵՍԵՆՏԻՆԻԱՆՑ

ԱՌ ՀԱՅԱՋԳԻ ԱՇԱԿԵՐՏՈՒ
ՌՕՊԵՐԹԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ.

Ազնիւ աշակերտներ

Լսեցի թէ մօտեւս բողոքեր էք առ վարժարանի Տնօրէնն, այս կարգադրութեան դէմ, որով կը տրամադրէր զաշակերտս ուսնել անպատճառ բողոքական կրօնը: Արդո՞վմ ձեր այդ ազգասիրական վարմունքը, նկատելով որ ատոնք կը յանդգնին ազատամտութեան դիմակին տակ ամեն տեսակ պժգալիք գործել: Ա՞յլ ցաւէի ես արդէն ձեր վրայ Ռօպէրթեան վարժարանի մէջ ուսանելունդ համար, կը ցաւէի զի փոխանակ ազատամիտ յարկերու՝ կ'երթաք կուսանիք մոլեռանդներու յարկի մը տակ, որուն հիմնադրուելուն նպատակը միայն Բողոքականութիւնը տարածել է:

Ասով չեմ ուզեր ըսել թէ ազգային յարկերու տակ և ե՞մ զատարարութեցէք, զի անհարին է օտար լեզուներ և բարձր գիտութիւններ կատարելապէս սովորել հօդ, այլ կ'ըսեմ թէ հարկ է փախիլ այն տեղերէն՝ ուր կրօնամոլութեան պրժգալի ակտը կը տիրէ, և երթալ հօն ուր ազատամտութիւնը ժողովրդեան մեծագոյն մասէն ընդունուած ըլլալով կրօնական երկպառակութեան, քինանդութեան ու մոլեռանդութեան միակ դարմանն նկատուած է: Հոն ազատ և համարձակ ձեր խիղճն ու հաւատքը պաշտելով ջանացէք որ ըլլաք կատարեալ լուսամիտ անձեր, և երբ որ մը ձեռն ի ձախատ դրած աշխարհիս մարդոց բաւուցը վրայ մտածէք, ձեր սրտին խորէն հառաչ

արձակեցէք այն մոլեռանդներուն դէմ, որոնք ընդ միշտ եղբայր եղբօր դէմ կը պատակօեն:

Բ. Ա. ԱՐԹԻՆՕՖ

28 ԵՊՐ. 1875

Ի-ՅԵ-ԴԵ:

Օրադիր Թ. 1052 Սեպտ. 29.

ՆՈՒԷՐ.

Բարձր. Միտհաթ բաշա հինգշաբթի օր մեր Ազգային Հիւանդանոցը այցելութեան երթալով, ամեն յարկերն ալ շրջելով մի ըստ միօրէ աչքէ անցնելէն յետոյ, 5 Օսմ. ոսկի նուէր մը շնորհելով մեկներ է:

Օրադիր Թ. 1054 Հոկտեմ. 14.

ՅԱԳՈՒԼԵԱՑ.

Ինքնագիր-Բեան Արարապ Ահապէրոյ.

Ներկայ ամսոյ 25-ին ըստ սովորութեան կատարուեցաւ տեղւոյս երկսեռ ուսումնարանաց 6-երորդ տարեգարձի հանդէսը խիստ շքեղ արարողութեամբ, զի նոյն օրը (որ Ս. Քրիստափոր եկեղեցւոյ տօնախմբութիւնը կատարուեցաւ) զինի արձակման Ս. Պատարագին քահանայք և զպիք խաչով և խաչվառով Շարական երգելով զիմեցին զէպ յՕրիորդաց ուսումնարան, որանց ետևից զնում էին և բազմամբօխ ժողովուրդ, արք և կանայք, նոյն օրուայ մատաղից մասնակից լինելէն յետոյ, նոյն հանդիսով մտան ուսումնարան, ուր կարգաւ շտրուած էին երկսեռ աշակերտներ յաջ և յահակ իրանց ուսուցիչներով և ուսուցչուհիներով. նոքա ևս երգեցին յարմարաւոր Շարական, և Անդաստան օրհնուեցաւ, և յետոյ ըսկսեցին հետզհետէ կարգալ խորհրդաւոր ծառեր, և լրանալիս՝ երգում էին երկսեռ մանուկներ սրբաշարժ երգեր. 1, ծառն կարգաց Հախնազարեանց Պ. Սարգիսն (որ հօգարարութեան անգամ է), 2, Տ. Աւետիքեանց Պ. Նիկողայոսն

Հայկաբանութեան ուսուցիչն և Յ. Սարգսեանց
Պ. Ստեփան թուաբանութեան ուսուցիչն. սոցա
երկուսի ծառն ևս արուեստական դպրոց բանալու
խիստ կարևորութեան համար առաջարկութիւն
ներ էին. թէպէտ ուսումնարանի նախկին աշա-
կերտներից մինը պատրաստել էր ծառ, բայց հան-
դիսականներից անյայտ մի պատճառով՝ յետա-
ձգուեցաւ և չը կարողացաւ կարգաւ. այնուհետեւ
կարգացուեցաւ ուսումնարանաց միամեայ մտից և
կից հաշուացուցաւ. վերջապէս բոլոր հանդիսա-
կանք զոհ սրտով մեկնեցան, օրհնելով և գովե-
լով երկսեռ ուսումնարանաց հայրենասէր հիմնա-
դիրներին, և մանաւանդ մեր Վեհափառ Հայրա-
պետին, որոյ հայրական հովանաւորութեան են-
թարկուած շարունակում են ուսումնարաններ-
իրանց գովելի ընթացքը դէպ ի յառաջադիմու-
թիւն ի պարծանս ազգութեան:

Բայց ցաւելով եմասում որ Եղուկեցոց ոմանք
տակաւին չճանաչելով Օրիորդաց ուսմանց կարեւ-
րութիւնը՝ զուրկ են պահում՝ նոցա մտաւոր զար-
գացմունքից, չեն մտածում որ նոքա ապագայ սե-
րնոց ուսեալ և կրթեալ մայրեր են դառնալու
ինչպէս որ Ամերիկայի և Եւրոպայի բոլոր ազգեր՝
քանի տարի առաջ ճանաչելով ի զործ զրին, և այ-
սօր ահա՝ նոցա պտուղները վայելում են՝ թէ մտա-
ւորապէս և թէ նիւթականապէս, մինչդեռ Հայաս-
տանը նոր սկսած է նոյն կարեւորութիւնը ճանաչել.
Ասում են կարճատես ոմանք. «Ազգիանց ինչ հար-
կաւոր ուսումը դիտութիւն և ուրիշ լեզու, այլ
այնքան սովորի իւր մայրենի լեզուն որ կարողա-
նայ գրել և հասարակ գիտնալ միայն վարժ ըն-

թերցանութիւն, և սովորի փոքր ինչ և կար-
և ձեռագործութիւն: Ինչ օգուտ կը բերէ՝ սո-
վորել Աշխարհագրութիւն, երբ որ իւր հայ-
րենեաց սահմանից դուրս գտու չեն, ինչ հար-
կաւոր է սովորել թուաբանութիւն՝ երբ որ
մաճառական դառնալու չեն և ըն. և ինչ:

Ինչ հարկաւոր է . . . լեզու գիտնալ՝
երբ որ իրանց կենաց մէջը Հայերէն են խօսելու
միշտ. (երանի՜ թէ Զի աւելի սիրում են միշտ
Զօկերէն խօսիլ ոչ թէ Հայերէն): Խղձալի
կարճատեսներ չեն մտածում որ նոքա ապա-
գայ որդեց մայր դառնալով՝ նոցա նախակրթիչ
ևս լինելու են. ուրեմն թող համոզվին և ու-
ղարկեն իրանց աղջկունք ուսումնարան՝ որ կըր-
թուին կարեւոր ուսմունքներով, ինչպէս որ ամեն
ծնօղք ցանկանալու են իրանց զաւակաց մտաց
լուսաւորութեան առանց սեռի խտրութեան, ու-
րոնցմով Ազգն յառաջադիմէ դէպ ի զարգացումն:

ՄԵՍՐՈՎՐ ԲԱՀԱՆԱՑ ՓԱՓԱԶԵԱՆՑ.

Ի 28 - 2 Հ. 1875 - Ժ.

Վ. Ս. Գ. Լ. Ե.

Ա Ջ Դ.

Ամսագրոյս ներկայ թուոյ 389 երեսի 3
և 4-րդ տողից մէջ՝ միատուր անդգուշու-
թեամբ՝ ընթերցանելի բառի տառից ոմանք
դուրս ելած լինելով՝ սխալ տպեալ է շատ
թերթից մէջ:

ԾԱՆՈՒՅՈՒՄՆ

Արարատ ամսագրոյս 1-րդ շրջանը մերհեցած լինելով, որ
է ի Յունվարէ յառաջակայ 1874 ամի, կ'իտութամք հրաւեր կար-
գալ մեր Ազգայնոց, որպէս զի ամսագրոյս բաժանորդագրուիլ
բարեհաճողներն՝ իւրեանց կամքը յայտնեն Արարատայ Գոր-
ծակալաց՝ կամ ուղղակի խմբագրութեանս հանդերձ Հասցէիւքն:

Արարատայ պարունակութեանց ծրագիրն, թերթից քա-
նակութիւնն և բաժանորդագիրն անփոփոխ կ'մնայ: